ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

23.12. 2019թ
N_86_

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Գ.ՄԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում Դաշտաքար համայնքի 16.12.2019 թվականի ավագանու թիվ 11 նիստի արձանագրությունը:

Համայնքի ղեկավար՝ Ն. Մալխասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

2019թ.-ի դեկտեմբերի 16-ին, ժամը 11-ին ՀՀ, Արարատի մարզի Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 11 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու հետևյալ անդամները.

| | | |
|---|---|---|
| Աբրահամ | Աբրահամյան | |
| Լյուդվիգ | Այնազյան | բացակա |
| Արմեն | Աթոյան | |
| Արամ | Մալխասյան | |
| Անգին | Սարգսյան | |

Նիստին, որպես հրավիրյալ անձինք, մասնակցում էին՝
Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը քարտուղարում էր աշխակատազմի քարտուղար՝ Ա. Վարդանյանը
Նիստը նախագահում էր համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգը հաստատելու հարցը:
2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ տրամադրելու մասին հարցը:
3. Համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.
4. Ոռոգման ջրագծի վերանորգման ծրագրի իրականացման համար բյուջեից ներդրում կատարելու մասին հարցը.

1. Լսեցին նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը.

*(Զեկ՝ Ն. Մալխասյան)*

Արտահայտվեցին ավագանու անդամներ Արամ Մալխասյանը, Աբրահամ Աբրահամյան և Անգին Սարգսյանը:

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով,

Դաշտաքարի ավագանին միաձայն որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 33

Հաստատել 16.12.2019 թվականի ավագանու նիստի օրակարգը.

| | | |
|---|---|---|
| Աբրահամ | Աբրահամյան | կողմ |
| Լյուդվիգ | Այնազյան | բացակա |
| Արմեն | Աթոյան | կողմ |
| Արամ | Մալխասյան | կողմ |
| Անգին | Սարգսյան | կողմ |

2. Լսեցին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ տրամադրելու մասին հարցը:

*(Զեկ՝ Ն. Մալխասյան)*

Արտահայտվեցին ավագանու անդամներ Աբրահամ Աբրահամյանը և Անգին Սարգսյանը:

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը,
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.01.2010 թվականի N 16-Ն որոշման պահանջներով՝

Դաշտաքարի ավագանին միաձայն որոշեց.

Որոշում 34.

1. **Տալ համաձայնություն Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 03-034-0168-0016 ծածկագիրը կրող 125.0 հա գյուղատնտեսական նշանակության /արոտավայր/ հողամասերը մրցութային կարգով տրամադրել վարձակալության 10 տարի ժամկետով.**
   **1.1 Տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել կադաստրային զուտ եկամտի15% -ի չափով:**

| | | |
|---|---|---|
| Աբրահամ | Աբրահամյան | կողմ |
| Լյուդվիգ | Այնազյան | բացակա |
| Արմեն | Աթոյան | կողմ |
| Արամ | Մալխասյան | կողմ |
| Անգին | Սարգսյան | կողմ |

**3.** Լսեցին — Համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.
**(զեկուցող՝ Ն. Մալխասյան)**

Արտահայտվեցին ավագանու անդամներ Անգին Սարգսյանը և Արամ Մալխասյանը

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ավագանին որոշեց.

## ՈՐՈՇՈՒՄ 35

1. Վարչական բյուջեի Արտաքին լուսավորություն գործառնական դասակարգման ծրագրի 4251 հոդվածից հատկացնել Արտաքին լուսավորություն գործառնական դասակարգման ծրագրի 4212 հոդվածին՝ 70 000 ՀՀ դրամ:
2. Վարչական բյուջեի Արտաքին լուսավորություն գործառնական դասակարգման ծրագրի 4251 հոդվածը սահմանել 100 000 ՀՀ դրամ:
3. Վարչական բյուջեի Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման ծրագրի 4234 հոդվածից հատկացնել Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման ծրագրի 4111 հոդվածին 76 000 ՀՀ դրամ և Նախադպրոցական կրթություն գործառնական դասակարգման ծրագրի 4637 հոդվածին՝ 200 000 ՀՀ դրամ:
4. Վարչական բյուջեի Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման ծրագրի 4234 հոդվածը սահմանել 293 400 ՀՀ դրամ:
5. Վարչական բյուջեի Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման ծրագրի 4263 հոդվածից հատկացնել Նախադպրոցական կրթություն գործառնական դասակարգման ծրագրի 4637 հոդվածին 55 000 ՀՀ դրամ:
6. Վարչական բյուջեի Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման ծրագրի 4263 հոդվածը՝ սահմանել 0.00 ՀՀ դրամ:
7. Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասեր) գործառնական դասակարգման ծրագրի 4269 հոդվածից հատկացնել Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասեր) գործառնական դասակարգման ծրագրի 4239 հոդվածին 61 000 ՀՀ դրամ:
8. Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասեր) գործառնական դասակարգման ծրագրի 4269 հոդվածը սահմանել 439 000 ՀՀ դրամ:
9. Սոցիալ անապահով անձանց գործառնական դասակարգման ծրագրի 4729 հոդվածից 55 000 ՀՀ դրամ հատկացնել Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասեր) գործառնական

դասակարգման ծրագրի 4269 հոդվածին և 150 000 ՀՀ դրամ Նախադպրոցական կրթություն գործառնական դասակարգման ծրագրի 4637 հոդվածին:

10. Սոցիալ անապահով անձանց գործառնական դասակարգման ծրագրի 4729 հոդվածը սահմանել 50 000 ՀՀ դրամ:

| | | | |
|---|---|---|---|
| Աբրահամ | Աբրահամյան | | կողմ |
| Լյուդվիգ | Այնազյան | | բացակա |
| Արմեն | Աթոյան | | կողմ |
| Արամ | Մալխասյան | | կողմ |
| Անգին | Սարգսյան | | կողմ |

**4. Լսեցին** — Ոռոգման ջրագծի վերանորգման ծրագրի իրականացման համար բյուջեից ներդրում կատարելու մասին հարցը.

**(զեկուցող՝ Ն. Մալխասյան)**

Արտահայտվեցին ավագանու անդամներ Անգին Սարգսյանը, Աբրահամ Աբրահամյանը և Արամ Մալխասյանը

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի 3-րդ կետի՝ ավագանին որոշեց.

## ՈՐՈՇՈՒՄ 36

Թույլատրել համայնքի միջոցներից ներդրում կատարել Ջրային Կոմիտեի << Ջրային տնտեսության ԾԻԳ>> պետական հիմնարկի կողմից Դաշտաքար համայնքում ոռոգման ջրագծի վերանորոգման համար՝ ընդհանուր արժեքի 10 %-ի չափով:

| | | | |
|---|---|---|---|
| Աբրահամ | Աբրահամյան | | կողմ |
| Լյուդվիգ | Այնազյան | | բացակա |
| Արմեն | Աթոյան | | կողմ |
| Արամ | Մալխասյան | | կողմ |
| Անգին | Սարգսյան | | կողմ |

Օրակարգը սպառվեց, նիստը հայտարարվեց փակված:

Համայնքի ղեկավար Ն. Մալխասյան

Աշխ. քարտուղար Ա. Վարդանյան